

Եւ վարագրատ իւր ճաշին կը կոչէ «զամենայն աւագս պատուականս եւ զմեծամեծս» (նոյն, 236): Այս օրինակաց մէջ կարեւոր պարագայ մը կայ. արքային ճաշին ներկայ են լոկ ազնուականք, եւ անոցմէ եւս «նահապետը մեծամեծք եւ տաճարապետը» միայն (նոյն, 67). այնպէս որ բացակայ են անկից անոնց զաւակները, որ «սեպուհք» կը կոչուէին: — Դասակարգի նոյն խտրականութիւնը զգալի է իշխանական կոչնոց մէջ ալ. տիկնանց տաճարները կը մտնեն լոկ «պատուականք յարանց» (Եղիշ. 174), եւ ոչ թէ խառնիխուռն ամէն զասակարգէ միասին:

Թէ արդեօք թագաւորը մեր իշխանաց խնճոյից կ'երթա՞ր, բաւական վկայութիւն չեմ գտած: Հին աւանդութենէ յիշուած է արդարեւ՝ «ճաշ գործել Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի», եւ արքային երթալը (Խոր. 58, 129): Բայց այս դէպքը վիպական է. եւ տիրող սովորութեան մ'աւելի ապահով գրաւականը պիտի լինէր, եթէ ունենայինք գոնէ պատմական ուրիշ օրինակ մ'ալ: Ընդ հակառակն օտար իշխանաց հրաւիրման երթալն յայտնի է. զոր օրինակ՝ Տիրան ընթրիք տուաւ եւ փոխարէնն ընդունեցաւ Ատրպատականի վարազ Շապուհ մարզպանէն. եւ Պապ